

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1565-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<----->>>-----2022 N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1565-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և
34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության
կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի
սեպտեմբերի 24-ի «Տրանսպորտային միջոցների տեխնիկական
գննություն անցկացնելու կարգը սահմանելու և Հայաստանի
Հանրապետության կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի
N 344-Ն, 2007 թվականի փետրվարի 15-ի N 346-Ն, 2007 թվականի
ապրիլի 5-ի N 401-Ն ու 2011 թվականի մարտի 31-ի N 350-Ն
որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1565-Ն որոշման
մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 3-րդ կետում «N 3 ցանկի» բառերը փոխարինել «N 2 ցանկի»
բառերով.

2) հավելվածի 7-րդ կետի 2-րդ ենթակետի 2-րդ նախադասությունը շարադրել
հետևյալ խմբագրությամբ.

«Գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման փաստը
հավաստող փաստաթուղթ չի պահանջվում, եթե տրանսպորտային միջոցի
գույքահարկի պարտավորությունների ամբողջական կատարման վերաբերյալ
տեղեկատվությունը հասանելի է էլեկտրոնային առցանց եղանակով, ինչպես
նաև նոր ներմուծված և ճանապարհային ոստիկանությունում մշտական
հաշվառման ենթակա մեխանիկական տրանսպորտային միջոցների

տեխնիկական գննության ժամանակ.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ն. Փաշինյան